

Հաշվետվություն

«Վայոց ձոր մարզպետի աշխատակազմի Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2023թ-ի ինն ամիսների ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու Ժամանակաշրջանում աշխատակազմի փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 24528 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 8642 մտից, 6713 ելից, 9173 ներքին:

2023թ-ի ընթացքում ստացվել է 510 դիմում:

- ա/ Դրամական օգնություն է խնդրել 399 քաղաքացի: 366 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 33-ը՝ մերժվել է:
- բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 8 քաղաքացի, բոլոր 8 դիմումներին պատասխանվել է:
- գ/ Առողջապահական բնույթի 13 դիմում է ստացվել, ստացված 13 դիմումներն էլ բավարարվել են:
- դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 12 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:
- ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 18 քաղաքացի, 18-ին տրվել է դրական պատասխան:
- զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 6 քաղաքացի և ստացել են դրական պատասխան: :
- է/ Հողաշինության հարցերով դիմած քաղաքացիներից 8-ին էլ տրվել է դրական պատասխան:
- ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 33 քաղաքացի և ստացել դրական պատասխան:
- թ/ Ստացվել է այլ բնույթի 13 դիմում: